

Գ.ԱՆԴԵՐՍԵՆ

ՄԱԿԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

839.815
Ա - 58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

26 NOV 2011

339.81v
4-58
սց.

Հ. ԱՆԴԵՐՍԵՆ

ՄԱՏՆԱՉԱՓԻԿԸ

ԹԱՐԳՄ. Ռ. ԶՈՂՐԱԲՅԱՆԻ

Թուառվի մարզային հոգետկան „Թոլօնվիկ“ հրատակչություն
Առաջնաւոր Խոհ, 1938

12 FEB 2013

1648



БІЕЛІС. А
Академії наук
УРСР

В020402



8220-53

Մի կին շատ եր ուզում փոքրիկ յերեխա
ունենալ։ Մի որ նա գնաց պառավ վհուկի մոտ և
առաց։

— Յես այնպես եմ ուզում փոքրիկ յերեխա
ունենալ. չես ասի ինձ արդյոք, վորտեղ կարելի
յե գտնել։

— Քո զարդին կարելի յե ճար անել, — ասաց
վհուկը։ Ահա քեզ այս զարու հատիկը, դիր ծաղ-
կամանի մեջ և դու կտեսնես, թե ինչ կլինի։

— Շնորհակալ եմ, — ասաց կինը և վհու-
կին յերկու գրոշ տվեց:

Տանը նա գարու հատիկը զցեց հողի մեջ, և
խսկույն նրանից մի մեծ, գեղեցիկ ծաղիկ բու-
նեց: Ծաղիկը շատ նման եր կակաչի, բայց նրա
թերթիկները պինդ սեղմված եյին իրար չբաց-
ված կոկոնի թերթիկների նման:

— Այ քեզ սքանչելի ծաղիկ, — բացական-
չեց կինը և համբուրեց գեղեցիկ կարմիր-դեղնա-
խառն թերթիկները: Յեվ հենց վոր նա համբուրեց
նրան, ծաղիկ մեջ մի բան շրխկաց, և նա բաց-
վեց: Այժմ յերևաց, վոր դա իսկական կակաչ է:
Ծաղիկ մեջտեղում կանաչ աթոռիկի վրա նստած
եր մի փոքրիկ շքնաղ աղջիկ, յեղած-չեղածը մի
ճկութի չափ: Նրա անունը դրին Մատնաշափիկ:

Նրա որորոցն ընկուզի փայլուն կեղեն եր,
դոշակը՝ կապույտ մանուշակը, իսկ վերմակը՝
վարդի թերթիկը: Գիշերը նա ընում եր կեղենի
մեջ, իսկ ցերեկը խաղում եր սեղանի վրա. կինը
ջրով մի ափսե դրեց սեղանի վրա, նրա շուրջը
ծաղկե պսակ հյուսեց, իսկ ծաղիկների ցողուն-
ները ջրի մեջ դրեց: Ջրում լողում եր կակաչի
խոշոր մի տերև: Մատնաշափիկը նրա վրա նստած
ջրի յերեսով ափսեյի մի ծայրից մյուսն եր



Մատնաշափիկը ափսեյի մի ծայրից մյուսն եր լողում.


լողում։ Զիու յերկու սպիտակ մազ ծառայում
ելին նրան թիակների տեղ։ Վորքան հրաշալի
յեր այս բոլորը։ Մատնաչափիկը յերգել ել գե-
տեր։ Յեվ այդպիսի գեղեցիկ, մեղմանուշ ձայն
դեռ վոչվոք չեր լսել։

Մի անգամ գիշերը, յերբ Մատնաչափիկը
պառկած եր իր աննման անկողնում, կոտրած
պատուհանից ներս մտավ զզվելի դոդոշը։ Նա
անճոռնի յեր, մեծ և թաց։ Դոդոշն ուղղակի
ցատկեց սեղանի վրա, վորտեղ վարդի թերթիկի
տակ քնած եր Մատնաչափիկը։

— Ահա իմ վորդու համար լավ հարսնացու,—
ասաց դոդոշ և վերցնելով կեղեր, վորի մեջ
քնած եր Մատնաչափիկը, դուրս թռավ պատու-
հանից գեպի պարտեզ։

Այստեղ մեծ ու լայն գետ եր հոսում, իսկ
նրա ափին մոտիկ մի ճահիճ կար։ Հենց այդ-
տեղ ել, տիղմի մեջ, ապրում եր դոդոշն իր վոր-
դու հետ։ Ուհ, վորքան զզվելի և գարշելի յեր
վորդին, իսկեւսկ մայրը։ — Կը ոռ, բրեկեկե, —
ահա այդքանը միայն նա կարողացավ ասել,
յերբ տեսավ չքնաղ աղջկան ընկուզի կեղեսի մեջ։

— Այդքան շատ մի խոսիր, թե չե նա կը-
զարթնի, — ասաց պառավ դոդոշը։ Կարապի փետրի



Դոդոշը վերցնելով կեղեր, վորի մեջ քնած եր Մատնաչ-
փիկը, դուրս թռավ պատուհանից պարտեզ

նման թեթև ե նա, մեկ ել տեսար փախավ։
Տանենք նրան գետի մեջտեղը և դնենք ջրաշու-
շանի լայն տերևի վրա, վորն այդ փոքրիկի համար
ահագին մի կղզի յե։ Այնտեղից նա չի կարող
փախչել, իսկ սենք այդ միջոցին տիղմի մեջ սենյակ
կպատրաստենք ձեր յերկուսիդ ապրելու համար։

Գետում շատ ու շատ ջրաշուշաններ եյին
բնականում։ Նրանց լայն և կանաչ տերևները լողում
եյին ջրի յերեսին։ Ամենահեռավոր տերևն ամե-
նից մեծն եր։ Մոտեցավ պառավ դոդոշը հենց
այդ տերևին և դրեց նրա վրա ընկույզի կեղել
Մատնաչափիկի հետ։

Առավոտյան կանուխ զարթնեց խղճուկը և
տեսնելով, թե վորտեղ ե ինքը, դառը լաց յեղավ։
Զուրը չորս կողմից պատել եր Մատնաչափիկին,
և ցամաք դուրս գալու բոլորովին հնար չկար։

Իսկ պառավ դոդոշը նստել եր տիղմի մեջ և
զարդարում եր սենյակը յեղեգնով և ղեղին ջրա-
շուշաններով։ Նա ուզում եր, վոր իր հարսնացուի
համար ամեն ինչ, վորքան կարելի յե, գեղեցիկ
լինի սարքած։ Հետո նա իր անձոռնի վորդու հետ
լողալով մոտեցավ Մատնաչափիկի տերևին, վոր
վերցնին րագեղեցիկ մահճակալը և դնի ննջարանը։

Պառավ դոդոշ՝ աղջկա առաջ խոնարհ նստե-

լով ջրի մեջ՝ ասաց։ — Ահա իմ վորդին, քո ապա-
գա ամուսինը՝ Փառավոր կյանք կունենաք դուք
ներքեսում, տղմի մեջ։

— Կը՝ ոռ, կը՝ ոռ... բբեկեկե, — ահա այսքանն
եր, վոր ասաց վորդին։

Նրանք վերցրին գեղեցիկ մահճակալը և լու-
զալով հեռացան, իսկ Մատնաչափիկը՝ մենակ
նստած կանաչ տերևին՝ դառը լաց եր լինում։
Նա բոլորովին չեր ուզում զզվելի դոդոշի մոտ
ապրել և նրա ատելի վորդու կինը դառնալ։

Զրում լողացող փոքրիկ ձկնիկները՝ գլուխ-
ները դուրս հանած՝ նայում եյին աղջկան։

Հենց վոր նրանք աղջկան տեսան, համոզվե-
ցին, վոր նա չքնաղատես ե, և շատ ցավեցին,
վոր զզվելի դոդոշի ձեռքն ե ընկնելու։ Վոչ
այդ չի լինի։

Ձկնիկները հավաքվեցին տերևի կանաչ ցո-
ղունի շուրջը, ատամներով կտրեցին այն, ու
տերևնը Մատնաչափիկի հետ միասին լողալով
գնաց գետի յերեսով։

Մատնաչափիկն առաջ եր շարժվում, իսկ
թփերի մեջ նստած փոքրիկ թռչնիկները նրան
նայելով յերգում եյին՝ «վորքան չքնաղ, փոքրիկ
աղջիկ ե»։


Ու տերեւը լողում եր, հալ ողում:

Հրաշալի սպիտակ մի թիթեռնիկ ամբողջ ժամանակ թռչկոտում եր Մատնաչափիկի շուրջը և,
վերջապես նստեց տերեւին:

Մատնաչափիկն ուրախ եր. զգվելի դողոշն
այժմ նրա հետեւից չեր կարող հասներ. իսկ շրր-
ջապատն այնքան գեղեցիկ եր: Արեգակը լուսա-
վորում եր ջուրը, իսկ ջուրը, կարծես, հալած
վուկի լիներ:

Մատնաչափիկը հանեց իր գոտին, նրա մի
ծայրը կապեց թիթեռնիկի մեջքից, իսկ մյուսն
ամրացրեց տերեւին: Ու նրանք ավելի արագ
առաջ ընթացան:

Մոտերքում թռչում եր մայիսյան բղեղը:
Տեսնելով աղջկան, նա բռնեց թաթիկով աղջկա
բարակ մեջքից և տարագ հանեց ծառի վրա, իսկ
կանաչ տերեւը շարունակեց առաջ լողալ, հետն ել
թիթեռնիկը, չե՞ վոր նա կապած եր տերեւին և
չեր կարող ազատվել: Ո՛, վորքան վախեցավ խեղճ
Մատնաչափիկը, յերբ մայիսյան բղեղը նրան
բռնած բարձրացավ ծառը: Բայց ավելի վշտացած
եր նա գեղեցիկ, սպիտակ թիթեռնիկի համար,
վորին ինքն եր կապել տերեւին: Յեթե թիթեռ-
նիկին չհաջողվի ազատվել, նա սովից կմեռնի:



Մոտերքում թռչում եր մայիսյան բղեղը:

Բայց մայիսյան բգեղն իսկի դարդ չեր անուան Նա Մատնաշափիկի հետ միասին տեղավորվեց ծառի ամենամեծ տերեի վրա, հյուրասիրեց նրան ծաղկի քաղցր հյութով և ասաց, վոր թեպետ և Նա մայիսյան բգեղներին բոլորովին նման չե, բայց և այնպես շատ հմայիչ ե: Հետո նույն ծառի վրա ապրող մյուս մայիսյան բգեղներն այցելության յեկան: Նրանք Մատնաշափիկին վոտից զլուխ զննում եյին: Իսկ որիորդ բգեղներն իրենց շոշափուկները շարժելով զարմացած առում եյին.

— Տեսեք, նա միայն յերկու վոտք ունի: Շատ ախտու:

— Նա շոշափուկներ չունի:

Ի՞նչ բարակ մեջք ունի: Թու, վորքան նման ե մարդու: Վորքան տգեղ ե,—ասացին միաբերան տիկին բգեղները:

Սակայն Մատնաշափիկը շքնաղատես եր: Մայիսյան բգեղն ել, վոր ինքն եր բերել Մատնաշափիկին, շատ եր հավանում նրան. բայց յերբ մյուս բոլոր բգեղներն ասացին, թե այդ աղջիկն անձունի մեկն ե, հավատաց այդ բանին և չուզեց նրան իր մոտ պահել: Թող ուր ուզում ե դնա: Չպեղը ծառից ցած թուավ Մատնաշափիկի

հետ և դրեց նրան յերիցուկի վրա: Այստեղ Մատնաշափիկն սկսեց լաց լինել: Նա շատ եր ցավում, վոր ինքն այդքան տգեղ ե,—չե վոյ մայիսյան բգեղներն անգամ չուզեցին նրան իրենց մոտ պահել: Բայց իսկապես նա վարդի ամենագեղեցիկ թերթիկի պես քնքուշ եր ու հստակ:

Խեղճ Մատնաշափիկն ամբողջ ամառը մենակ ապրեց մեծ անտառում: Նա խոտաբույսերից իր համար փոքր անկողին հյուսեց և կախեց այն կուտուկի տերեի տակ, վոր անձրևից չթրջվի: Նա կերակրվում եր ծաղիկների անուշ փոշով, իսկ ծարավը հազեցնում եր ցողով, վորն ամեն առավոտ իջնում եր տերևների վրա:

Այսպէս անցան ամառն ու աշունը: Մոտենում եր ձմեռը՝ ցուրտ, յերկար ձմեռը: Բոլոր թոշնիկները, վորոնք այնքան գեղեցիկ յերգում եյին Մատնաշափիկի համար, հեռացան, զնացին. ծաղիկներն ու տերևները թառամեցին: Մեծ կուտուկը, վորի տակ նա ապրում եր, կուչ յեկավ մնաց միայն նրա գեղին, թառամած ցողունը:

Մատնաշափիկը սաստիկ մրսում եր, վորով հետև նրա շորերը պատառոտվել եյին, ինքն ել այնքան եր քնքույշ ու փոքր, վոր վախենում եր բոլորովին սառչի:

Զյուն յեկավ, և ձյան ամեն մի փաթիլը նրա համար նույնն եր, ինչ վոր մեզ համար բահով լիր ձյունը։ Մենք չե՞ վոր մեծ ենք, իսկ նա՞ մի ճկութի չափ։ Մատնաչափիկը փաթաթվեց չորացած մի տերևի մեջ, բայց նա վատ եր տաքացնում, և խեղճը ցրտից դողում եր։

Այն անտառի կողքին, վորտեղ ապրում եր Մատնաչափիկը, գարու մի մեծ արտ կար։ Գարին վաղուց արդեն հավաքել եյին, միայն չորացած, մերկ կոթերն եյին դուրս ցցված սառած գետնից։ Գնում եր Մատնաչափիկն այդ կոթերի միջով, ինչպես խիտ անտառի միջով և ամբողջ մարմնով դողում եր ցրտից։

Այսպես նա հասավ չոր խոտերով ծածկված մի բնի։ Այստեղ ապրում եր դաշտի մուկը։ Նրա ապարանքը լեփ-լեցուն ե հատիկով, խոհանոցն ու մառանը լիսուատ եյին։ Նա ապրում եր տաքտան մեջ և առանց վորևե կարիքի։ Խեղճ Մատնաչափիկը կանգնեց դուան մոտ ու նրանից աղքատի նման գարու հատիկի մի փշուր խնդրեց, վորովինետե յերկու որ եր, վոչինչ չեր կերել։

— Վայ, իմ խղճուկս,—ասաց դաշտի մուկը։ Նա մի բարի պառավ եր։—Յե՛կ ինձ մոտ, իտ տաք բնակարանը և կե՛ր ինձ հետ միասին։

Յեկ վօրովինետե Մատնաչափիկը նրան շատ դուր յեկավ, ասաց.

— Կարող ես ամբողջ ձմեռն ինձ մոտ մնալ, բայց տես, սենյակներու լավ կմաքրեսն ինձ հեքյաթներ կպատմես, յես հեքյաթ շատ եմ սիրում։

Ու ինչ վոր հրամայում եր բարի պառավ մուկը, Մատնաչափիկը կատարում եր։ Նա սկսեց շատ լավ ապրել։

— Շուտով մեզ մոտ հյուրեր պիտի գան, — ասաց դաշտի մուկը։ — Իմ հարևանը սովորաբար շաբաթը մի անգամ ինձ այցելում եւ։ Նա ինձնից ել ավելի հարուստ ե ապրում։ Նա ընդարձակ դահլիճներ ունի և հազնում ե սև թագիե փարթամ մուշտակ։ Այ, ինչ լավ կլիներ, յեթե քեզ հաջողվեր նրա հետ ամուսնանալ. դու շատ լավ կյանք կունենայիր։ Մակայն նա կույր եւ։ Դու նրան պետք ե պատմես քո ամենալավ հեքյաթները։

Բայց հարևանը Մատնաչափիկին դուր չեկավ։ Ախար նա խլուրդ եր։ Յեկավ մի որ իր սև թագշե մուշտակը հագին։ Նա այնքան հարուստ եր ու գիտուն։ Նրա ապարանքը դաշտի մկան բնակարանից քսան անգամ մեծ եր. բայց նա չեր սիրում վոչ արև և վոչ ել գեղեցիկ ծաղիկներ

ու նրանց մասին շատ վատ կարծիք եր հայտնում, վորովինետև արև ու ծաղիկ իր կյանքում յերբեք չեր տեսել: Մատնաչափիկն սկսեց յերգել: Նա յերգեց մայիսյան բգեզի յերգն ու ապա մի ուրիշ յերգ: Խլուրդը, կախարդված նրա չնաշխարհիկ ձայնով, սիրահարվեց:

Մի քիչ հետո խլուրդն իր տնից մինչև նրանց ընակարանը գետնատակի մի յերկար միջանցք փորեց և թռյլ տվեց, վոր դաշտի մուկն ու Մատնաչափիկն զբոսնեն այնտեղ, յերբ վոր կամենան: Սակայն նա խնդրեց նրանց, վոր չվախենան այնտեղ ընկած սատկած թռչնից: Դա խսկական թռչուն եր՝ կտուցով ու փետուրներով, և, ինչպես յերեսում ե, նոր, հենց ձմռան սկզբին եր սատկել, նա թաղված եր այն տեղը, վորտեղ խլուրդը փորեց իր միջանցքը:

Խլուրդը բերանն առավ փայտի այնպիսի մի կտոր, վորը մտել եր ու մթության մեջ ինքն իրան կրա'լի պես, լույս եր տալիս և առաջ անցավ, լուսավորելով յերկար ու մուժ միջանցը: Նրանք հասան այն տեղը, վորտեղ ընկած եր սատկած թռչունը: Խլուրդն իր լայն քթով առաստաղին դեմ տվեց ու հողը վեր բարձրացրեց: Առաստաղում մի մեծ անցք բացվեց, ու դրսի

Հ
Յ
Շ
Զ
Հ



Խլուրդն այցելության յեկավ իր ու թագչե մուշտակը հայոցին:




լույսը ներս թափանցեց։ Այդ ժամանակ Մատնաշափիկը տեսավ, վոր միջանցքում ընկած է մի սատկած ծիծեռնակ՝ գեղեցիկ թևերը կողքերին սեղմած և գլուխն ու վոտներն ել պարզած։ Խեղճ թոշնիկն, իհարկե, ցրտից եր սառել։ Մատնաշափիկին այդ բանը մեծ ցավ պատճառեց. նա շատ եր սիրում թոշուներին, — չե վոր նրանք ամբողջ ամառն իրենց յերգերով միխթարել եյին նրան։ Խլուրդը թաթով հրեց թոշնիկին և ասաց.

— Դադարել ե ձկալուց։ — Աստված վոչ անի թոշուն ծնվել։ Յես շատ ուրախ եմ, վոր իմ յերեխաները եղ բանից վախենալու բան չունին։ Այս արարածը բացի իր «ծիվ-ծիվ»-ից ուրիշ վոչինչ չունի, ու իհարկե, կամա-ակամա ձմեռը սովից պիտի մեռներ։

— Յես համաձայն եմ ձեզ հետ, — ասաց գաշտի մուկը։

— Ի՞նչ ոգուտ ունի թոշունն իր «ծիվ-ծիվ»-ներից։ Զմեռները ցրտից ու սովից զատ ուրիշ բան չի մնում նրան։

Մատնաշափիկը վոչ մի խոսք բաց չթողեց բերանից, բայց յերբ խլուրդն ու մուկը մեջք-ները դեպի թոշունը դարձրին, նա կուացավ



Մատնաշափիկն ավելի պէսդ փաթաթվեց ծիծեռնակին։

թոշնի վրա, գլխի փետուրները մի կողմ արավ և համբուրեց նրա փակված աչքերը։ «Գուցե սա հենց այն ծիծեռնակն ե, վորն ամառն ինձ համար այնքան հրաշալի յերգում եր, — մտածում եր նա։ — Վորքան ուրախություն պատճառեց ինձ այն սիրունիկ, գեղեցիկ թոշունը»

Հետո խուրդը նորից փակեց անցըը, վորից լույսը ներ եր թափանցում և Մատնաչափիկին տուն տարափ։ Գիշերը մատնաչափիկն ամենենին չեր կարողանում քնել։ Նա տեղից վեր կացավ, չորացած խոտերից մի մեծ գեղեցիկ վերմակ հյուսեց և նրա մեջ փաթաթեց սատկած թրոշնիկին։ Մկան սենյակում գտած փետուրները դրեց թոշնիկի տակը, վորպեսզի խոնավ գետնին շատ ցուրտ չլինի։

— Մնաս բարնվ, սիրուն թոշնիկ, — ասաց Մատնաչափիկը։

— Գնաս բարնվ, չնորհակալ եմ քո հրաշալի յերգիրի համար։ Դու յերգում եյիր ամառը, յերք բոլոր ծառերը կանաչ ելին, և արևն ել գգվանքով լուսավորում եր մեզ։

Հետո նա իր գլուխը դրեց ծիծեռնակի կըրծքին և հանկարծ վախ զգաց։ Թոշնիկի կըրծքի տակ մի բան սկսեց բարախել — դա նրա սիրուն

եր։ Ծիծեռնակը չեր սատկել։ Նա միայն փետացել եր ցրտից, իսկ այժմ տաքանալով կենդանացել եր։

Մատնաչափիկը վախից դողում եր։ Զե վոր թոշունն այդ փոքրիկի հետ համեմատած մի հսկա յեր, սակայն նա սիրտ առնելով, ավելի պինդ փաթաթեց ծիծեռնակին, ապա բերելով դաղձի այն տերեր, վորով ինքն եր ծածկվում, ծածկեց թոշնի գլուխը։

— Հետեյալ որը Մատնաչափիկը դարձյալ նրա մոտ գնաց։ Այժմ արդեն թոշնիկը բոլորովին կենդանացել եր. սակայն դեռևս շատ թույլ եր — մի ակնթարթ միայն կարողացավ աչքերը լսաց անել և Մատնաչափիկի վրա նայել, վորը լապտերի փոխարեն լույս տվող վտած փայտը բռնած՝ կանգնած ե նրա առաջ։

— Շնորհակալ եմ բեղանից, բարեսիրտ մանկիկ, — ասաց նրան հիվանդ ծիծեռնակը։ Յես այնպես տաքացա, վոր շուտով բոլորովին կկազդուրվեմ և դարձյալ կթոշեմ արեգակին։

— Այս, — ասաց աղջիկը, դուրսը սառնամանիք ե, ձյուն ե գալիս Մնա քո տաք անկողնում, յես ել կինամեմ քեզ։

Յեվ նա ծաղկի բաժակով ծիծեռնակին ջուր

բերեց։ Ծիծեռնակը ջուրը խմեց ու պատմեց, թե ինչպես ե նրա թեր վիրավորվել և թե ինչու չի կարողացել արագ թոշել մյուս ծիծեռնակների նման, վորոնք թռել, գնացել են հեռու հեռու տաք յերկիրներ։ Մառնամանիքից նա փետացել և ընկել ե գետին. այլևս վոչինչ չի հիշում ու բոլորովին չի յել իմացել, թե ինչպես ե ընկել այստեղ։

Ծիծեռնակն ամբողջ ձմեռը գետնի տակ մնաց։ Մատնաչափիկը նրա վրա հոգս եր տանում և շատ մտերմացավ նրա հետ։ Բայց դաշտի մուկն ու խլուրդն այդ մասին վոչինչ չպետք ե իմանային — չե վոր նրանք չեյին սիրում խեղճ անտուն ծիծեռնակին։

Հենց վոր գարունը յեկավ և արել տաքացրեց յերկիրը, ծիծեռնակը հրաժեշտ տվեց Մատնաչափիկին և պատրաստվեց թոշելու Նա հարցրեց Մատնաչափիկն՝ չի՞ կամենում արդյոք իր մեջ քին նստել ու թոշել։ Բայց Մատնաչափիկը չուզեց պառավ մկան սիրու կոտրելու մնաց։

— Մնաս բարով, մնաս բարով, բարի, հրաշալի աղջիկ, — ասաց ծիծեռնակը և դուրս թռավ գեպի ազատ աշխարհ։

Մատնաչափիկը նայեց նրա հետեւից ու աչ-

քերը լցվեցին արտասուրով։ Այնպես եր սիրել նա խեղճ ծիծեռնակին։

— Ծիկւծիվ, ծիկւծիվ, — յերգեց թռչունն ու թռավ, հեռացավ գեպի կանաչ անտառը։

Մատնաչափիկը շատ տխուր եր. նրան բոլորովին չեյին թողնում տաքանա արեի տակ, իսկ դաշտում մկան տան շուրջը ցանված գարին աճել եր ու դարձել մի ամբողջ անտառ։

— Ամառը դու քեզ համար ոժիտ կկարես, — ասաց մուկը, — կկարես բրդե շորեր և սպիտակեղեն։ Ու յերբ դու խլուրդի կինը դառնաս, վրագ հագնելու և տակդ փուելու բան կունենաս։

Մատնաչափիկն ուզեր-չուզեր պետք ե բուրդ մաներ։ Մուկն ել չորս սարդ վարձեց, վոր գիշերցերեկ գործվածք անեն։ Ամեն իրիկուն խըլուրդը հյուր եր գալիս և շարունակ ասում եր, թե շուտով ամտոր կանցնի, թե, փառը աստծո, այլևս արեն այնքան խիստ չի այրում ու յերբ ամառը վերջանա, նրանք հարսանիք կանեն։ Մակայն այս բաները Մատնաչափիկին չեյին ուրախացնում։ Նա չեր սիրում ձանձրալի խլուրդին։

Ամեն որ առավոտն արել ծագելիս և յերեկոյան մայր մտնելիս նա գաղտագողի դուրս եր գալիս մկան բնի շեմքը և բամուց որորվեղ հաս-

կերի միջով դիտում եր կապույտ յերկինքը։
Այդ ժամանակ նա միտք եր անում, թե ինչքան
լավ ե կյանքն ես լայն ու լույս աշխարհում, և
շատ եր ուզում տեսնել սիրուն ծիծեռնակին։

Հասավ աշունը։ Ամբողջ ոժիտը պատրաստ եր։

— Չորս շաբաթից քո հարսանիքն ե, — ա-
սաց դաշտի մուկը Մատնաչափիկին։ Իսկ Մատ-
նաչափիկը լաց յեղավ ու ասաց, վոր նա ձանձ-
րալի խլուրդին չի գնա։

— Հիմարություն ես դուրս տալիս, — ասաց
մուկը. — համառություն մի անի, թե չե կկծեմ
քեզ իմ սպիտակ ատամով։ Դու շատ լավ ամու-
սին կունենաս։ Այնպիսի սև թափշյա մուշտակ
թագուհին ել չունի։ Նրա բոլոր մառաններն ու
մթերանոցները լիքն են։ Դու պետք ե շնորհակալ
լինես այդպիսի ամուսին ունենալուդ համար։

Յեվ ահա պետք ե հարսանիք անեյին։ Խլ-
լուրդը յեկավ Մատնաչափիկին տանելու։ Խլուրդն
ու Մատնաչափիկը խորը դետնի տակ պետք ե
ապրեյին և յերբեք այլևս պայծառ արև չպետք
ե տեսնեյին, վորովհետեւ խլուրդն ատելով ա-
տում եր արել։ Խեղջ աղջիկը շատ տիխուր եր։
Նա դուրս յեկավ դուան շեմքն արևին հրաժեշտ
տալու, քանի դեռ կարող եր հրճվել նրանով։

— Մնաս բարե՛, կարմիր արև, — ասաց նա և
ձեռները վեր պարզեց։ Նա նույնիսկ փոքր ինչ
հեռացավ մկան բնից։ Փարին արդեն հնձել եյին,
միայն չոր կոթերն եյին դարձյալ դուրս ցցված։

— Մնաս բարե՛ և դու, — ասաց նա ու գրկեց
փոքրիկ կարմիր ծաղիկը, վոր դեռևս վողջ եր
մնացել։

— Բարեկիր ինձնից ծիծեռնակին, յեթե նրան
տեսնես։

— Ծիվ-ծիվ, ծիվ-ծիվ. լսվեց հանկարծ նրա
գլխավերեկում։ Նա վեր նայեց և տեսավ իր մոտով
թռչող ծիծեռնակին։ Ծիծեռնակը շատ ուրախա-
ցավ տեսնելով Մատնաչափիկին։ Աղջիկը պատմեց
նրան, վոր ինքը բոլորովին չի ուզում անձունի
խլուրդի կինը դառնալ ու ապրել գետնի տակ,
ուր յերբեք արև չի թափանցում։ Նա պատմում
եր ու աշքերից արտասուր թափում։

— Արդեն ձմեռ ե, — ասաց ծիծեռնակը։ Յես
թռչում եմ գեղի հետու, տաք յերկրներ, — ուզում
ես թռչել ինձ հետ։ Նստիր իմ մեջքին, պինդ
կապիր քեզ գոտով, և մենք կհեռանանք անձունի
խլուրդից ել, նրա գետնափոր բնակարանից ել։
Սարերով կանցնենք գեղի տաք յերկրներ, վորտեղ
արևն ավելի ևս գեղեցիկ ե, վոտրեղ միշտ ամառ


Ե և ամբողջ տարին ծաղկում են ծաղիկներ։
Թռիր ինձ հետ իմ սիրուն Մատնաչափիկ։ ԶԵ
վոր դու յես փրկել իմ կյանքը։

— Այն, յես կթռչեմ քեզ հետ, — ասաց Մատ-
նաչափիկն ու տեղավորվելով թռչնի մեջքին, վոտ-
ներով հենվեց նրա բաց արած թեփերին և գոտիով
իրեն կապեց ամենամեծ փետրին։

Ծիծեռնակը սլացավ դեպի վեր՝ ողը, թռավ
անտառի ու ծովի վրայով և հավերժական ձյունով
պատսճ բարձր սարերով։ Մատնաչափիկի համար
շատ ցուրտ եր։ Նա թաղվեց տաք փետուրների
մեջ և միայն գլուխն եր դուրս հանել, վոր հրճվի
այն վայրերով, վորտեղով անցնում եյին նրանք։

Յեվ ահա նրանք հասան տաք յերկրներ։ Արևն
այստեղ ավելի պայծառ եր լուսավորում, յերկինքը
յերկու անգամ ավելի բարձր եր, քան մեզ մոտ,
իսկ առուների և ցանկապատերի մոտ տեսակ-
տեսակ խաղող եր աճում։ Անտառներում հասու-
նանում եյին նարինջներն ու կիտրոնները։ Մըր-
տենու և դաղձի բուրմունք եր գալիս, իսկ ճանա-
պարհներին խոշոր գույնզգույն թիթեռնիկների
հետեւց վազվում եյին սիրունիկ յերեխաները։

Սակայն ծիծեռնակն ավելի հեռուն թռավ,
և շրջապատն ավելի հրաշալի դարձավ։ Կանաչ



Ծիծեռնակը սլացավ դեպի վեր ողը, թռավ անտառի ու
ծովի վրայով.

ծառերի մեջ, կապույտ ծովի ափին կանգնած եր սպիտակ փայլուն մարմարիոնից շինած մի հին պալատ։ Խաղողի վորթը փաթաթվել երնրա բարձր սյուներին, վորոնց ամենավերին մասում գտնվում էին ծիծեռնակի բազմաթիվ բներ։

— Ահա իմ տունը, — ասաց ծիծեռնակը։ — Իսկ դու ընտրիր քեզ համար այնտեղ, ներքեւմ բուսնող գեղեցիկ ծաղիկներից մեկը։ Յես քեզ կտանեմ այնտեղ, ու դու հրաշալի կապրես։

— Ա՛խ, վորքան լավ ե, — բացականչեց աղջիկը և ծափահարեց իր փոքրիկ ձեռներով։

Ներքեւմ ընկած եր մի մեծ մարմարե սյուն։ Գետին ընկնելու ժամանակ նա կոտրվել, յերեք կտոր եր յեղել, և այժմ նրանց արանքներում բուսել եյին խոշոր սպիտակ ծաղիկների։ Ծիծեռնակն իջեցրեց Մատնաչափիկին ծաղիկների լայն թերթիկներից մեկի վրա։ Յեվ ինչպես զարմացավ նա։ Ծաղկի մեջտեղում մի պստիկ մարդ եր նստած բյուրեղի նման սպիտակ ու թափանցիկ։ Նրա գլխին վոսկե թագ կար, ուսերին շողողուն թևեր, ինքն ել Մատնաչափիկից մեծ չեր։ Ամեն մի ծաղկի մեջ այդպեսի մի պատճի և կամ աղջիկ եր ապրում, իսկ այդ պստիկ մարդն ել նրանց բոլորի թագավորն եր։



Նրանցից ամեն մեկը մի-մի նվեր բերեց Մատնաչափիկին։

— Ինչքան գեղեցիկ ե այդ պստիկը, — շնջաց Մատնաչափիկը ծիծեռնակի ականջին:

Փոքրիկ թագավորը շատ վախեցավ ծիծեռնակից, չե վոր ծիծեռնակը նրա հետ համեմատած հսկա յեր, իսկ ինքը՝ փոքր և քնքույշ: Բայց հենց վոր Մատնաչափիկին տեսավ, շատ ուրախացավ. այդպիսի կեղեցիկ աղջիկնա դեռևս իր կյանքում չեր տեսել: Նա հանեց իր գլխից թագը և դրեց Մատնաչափիկի գլխին ու հարցրեց, թե ինչ ե նրա անունը և չի ուզում արդյոք նրա ամուսինը դառնալ — այն ժամանակ նա բոլոր ծաղիկների թագուհին կլինի:


— Այ, սա յե վոր կա լավ փեսացուն, վոշ թե դոդոշի վորդին կամ թափամորթ խլուրդը: Մատնաչափիկն իր հոժարությունը տվեց թագավորին: Այդ ժամանակ ամեն ծաղկից դուրս թռան պատանիներ և աղջիկներ այնքան հրապուրիչ, վոր Մատնաչափիկն ամենին չեր կշտանում նրանց նայելով: Նրանցից ամեն մեկը մի-մի նվեր բերեց Մատնաչափիկին: Ամենից ավելի նա հավանեց մեծ ճպուռի թափանցիկ թեվերին: Այդ թեւերն ամրացրին Մատնաչափիկի թիկուրին:

Այժմ նա յել կարող եր ծաղկից ծաղիկ թըռչ-

կուել: Ի՞նչ մեծ ուրախություն եր: Ծիծեռնակն իր ընում նստած, յերգում եր նրանց համար վորքան կարող եր, սակայն սրտով տխուր եր, վորովհետեւ նա սիրում եր Մատնաչափիկին և յերբեք չեր կամենա նրանից բաժանվել:

— Այլևս անունդ Մատնաչափիկ չպետք ել լինի, — ասաց աղջկան ծաղիկների թագավորը: Դա տգեղ անուն ե, իսկ դու այնքան գեղեցիկ ես: Ասուհետեւ բեզ կասեն Մայիսիկ:

— Մնաս բարով, մնաս բարով, — ասաց ծիծեռնակը և տաք յերկրներից կրկին թռավ գնաց դեպի հեռավոր Դանիա: Այստեղ նա բուն եր դրել հենց այն մարդու պատուհանի գլխին, վորը գիտեր հեքյաթներ պատմել: Ծիծեռնակը յերգեց նրան իր ծիվ — ծիվները: Այդ մարդուց ել մենք իմացանք այս ամբողջ պատմությունը:



Редактор П. Чатыньян. Техред Л. Жданович. Корректор С. Григорьян.

Изд. № 1. Сдано в набор 1 октября 1937 г., полписано в печать 27 декабря 1937 г.
Формат 60x92|16. Объем 2 п. листа. Тираж 3.500 экз. Упомоблит С—6932.

Типография Ростовского областного армянского издательства „Большевик“
(Ростов-Д., Ворошиловский 27). Заказ № 1664.

ՀՀ Ազգային գրադարան



NL0390108

ЧМС 50 ЧАР.
Цена коп.

1105

1648

Г. АНДЕРСЕН
ДЮЙМОВОЧКА

(На армянском языке)

Обложка худ. Н. Фидова

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „БОЛЬШЕВИК“
Ростов-Д., Ворошиловский пр., № 27.

Изображение